

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏԻ N 36  
ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

11. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ,  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ, ԴԻՎԿԻՋԱՐԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N380-Ա որոշմամբ հավանության արժանացած` Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների ծրագրի դրույթների`

1. Հավանություն տալ բնակչության հատուկ սպասարկման ծառայությունների համակարգի առողջացման, աշխատանքների թափանցիկության, դիակիզարանների ստեղծման միջոցառումների ծրագրին` համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության մարզպետներին` ապահովել սույն որոշման 1-ին կետով հավանության արժանացած` բնակչության հատուկ սպասարկման ծառայությունների համակարգի առողջացման, աշխատանքների թափանցիկության, դիակիզարանների ստեղծման միջոցառումների ծրագրի կատարումը` ծրագրով նախատեսված ժամկետներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2008թ. սեպտեմբերի 23

Երևան

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ,  
 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ, ԴԻԱԿԻՋԱՐԱՆՆԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N/N ը/կ	Միջոցառում	Հիմնական կատարողները	Ժամկետ
1.	«Հուղարկավորությունների կազմակերպման և դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «բ» ենթակետի և 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների համաձայն՝ գերեզմանատների իրավական հատուկ ռեժիմի (փակ, մասնակի փակ, բաց) վերաբերյալ որոշումների ընդունում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ համապատասխան համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)	2008 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ
2.	Երևան քաղաքի Աջափնյակ թաղային համայնքում գերեզմանատուն կազմակերպելու համար հատկացված 53 հեկտար մակերեսով հողամասը շահագործելու վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	Երևանի քաղաքապետարան ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	2008 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ
3.	Երևան քաղաքի բաց գերեզմանատների համար տրամադրված հողերի օգտագործման սխեմաների (հատակագծերի) մշակման և հաստատման ժամանակացույցը՝ ըստ գերեզմանատների, աշխատանքային խմբին ներկայացնելը	Երևանի քաղաքապետարան ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2008 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
4.	«Գերեզմանատեղերի համար վճարովի հիմունքներով տրամադրվող հողատարածքների 1 քառ.մետրի համար դրանց սպասարկման նպատակով վարձավճարներ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ կառավարությանն առըթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Երևանի քաղաքապետարան	2008 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
5.	ՀՀ Կոտայքի մարզի վարչական սահմաններում գտնվող Երևան քաղաքի «Դավթաշեն» գերեզմանատան զբաղեցրած տարածքի հատվածի վարչական	Երևանի քաղաքապետարան ՀՀ Կոտայքի մարզպետարան	«ՀՀ վարչատարածքային

	պատկանելիության վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելուց հետո:
6.	«Հուղարկավորությունների կազմակերպման և դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթների համաձայն բնակչության հատուկ սպասարկման ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան ՀՀ մարզապետարաններ ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	2008 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
7.	Երևան քաղաքում գործող գերեզմանատների բարեկարգման ծրագրերի մշակում՝ հաշվի առնելով առկա խնդիրների (սողանքներ, տարածքում օրենքով արգելված օբյեկտների առկայություն և այլն) լուծման անհրաժեշտությունը	Երևանի քաղաքապետարան ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2008 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
8.	«Երևան քաղաքում դիակիզարանի շինարարության համար նախագծային աշխատանքներ իրականացնելու նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն Երևանի քաղաքապետարան ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	2008 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
9.	Մեկ պատուհանի գաղափարախոսությամբ՝ բնակչությանը հատուկ ծառայությունների մատուցման ծրագրի մշակման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	Երևանի քաղաքապետարան ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2008 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
10.	«Գերեզմանատների տարածքների քաղաքաշինական մոնիթորինգի (համակարգված դիտարկումների) իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2009թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ
11.	ՀՀ մարզերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ուղղությամբ հուղարկավորության կազմակերպման գործընթացի ուսումնասիրությունների իրականացում և արդյունքների վերաբերյալ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային	2009թ. մարտի 2-րդ տասնօրյակ

	առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ	
12.	Հուլարկավորությունների կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Երևանի քաղաքպետարան ՀՀ մարզպետարաններ	2009թ. մարտի 3-րդ տասնօրյակ
13.	ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշման N 4 հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ բաց գերեզմանատների համար տրամադրված հողերի օգտագործման սխեմաների (հատակագծերի) մշակում և հաստատում՝ ըստ սույն միջոցառման 3-րդ կետով սահմանված ժամանակացույցի	Երևանի քաղաքպետարան ՀՀ մարզպետարաններ ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2009թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
14.	Հուլարկավորությունների կազմակերպման բնագավառում գործող, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների մասին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ ա. հուլարկավորության կազմակերպմանը վերաբերող փաստաթղթերի ձևակերպման, գերեզմանատեղի հատկացման, ինչպես նաև անվճար և վճարովի մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվական թերթիկի մշակում և տարածում բ. Երևան քաղաքի գերեզմանատներում նոր գերեզմանատեղերի հատկացման հերթականության մասին տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով գերեզմանատների էլեկտրոնային քարտերի մշակում և կայքերի ստեղծում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Երևանի քաղաքպետարան Երևանի քաղաքպետարան ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	2009թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ